խարդ։ Եւ կալեալ զթագաւորն եդին ի բանտի, և խընդրեցին զաւագ որդին՝ և նստուցին զնա յաթոռ թագաւորութեան հօր իւրոյ(*)։ Յայնժամ և մունետիկն աղաղակէր յամենայն քաղաքս սակս թագաւորութեան նոր թագաւորին սուլթան Մէհմէտի, որ էր ժամն ինն ներորդ։

Եւ յաւուրս մետասան թողին զթագաւորն ի բանտի. լայր դառնապէս, ոչ ուտէր և ոչ ըմպէր, աղաղակէր և զոռայր որպէս զանասուն, հառաչէր և պառաչէր անդադար, խնդրէր հնար գտանել յարգելական տեղացն ելանել և ոչ կարէր։

Եւ յՕգոստոսի Ը յաւուր Գշի առեալ ընդ իւրեանս զԴարայ Ալի դահիճն եւ վազվազակի ընթացան ի բանտն, և մարտեաւ դահիճն և իբրև ոչ կարէր յաղթել, յերանացն բուռն հարեալ և ճմլեալ նվազեցոյց ընկեցեալ ի գետնի և այսպէս դառն և սաստիկ մահուամբ խեղդամահ լեալ սպանաւ։ Եւ բարձին զդի թագաւորին ի վերայ գլխոց իւրեանց և թաղեցին զնա մերձ առ հարս իւր։ Եւ մահ թագաւորին եղև խորհրդեամբ մուհտուն և վէզիրին և զօրագլխաց եէնկիչէրուն և ոչ թելադրութեամբ առ հասարակ սպահուն, այլ սակաւուն։ Վասն որոյ ծրարեալ նախանձ ի սիրտս նոցա յայնմ օրէ և մախային ընդ միմեանս և եղեն զօրքն յերկուս գունդս, առանձին սպահին, առանձին և եէնկիչէրին։ Իսկ սպահին առիթ եդեալ զայն իր, աղաղակէին բացայայտ լինել մահապարտք թագաւորին։ Եւ միւս դասուն պետք և զօրագլուխք անքանակ փութացան համոզել առ ի խաղաղութիւն, այլ նոքա ոչ լըւեալ զնոյն բողոքէին պարտաւորել զնոսա, մինչ զի յաճախէր խռովութիւնք նոցա օր

(*) Լուս. osur զրէ. Դ. Սուլ. Մեհեմմետ յամի Տեառն 1648։